

Մինչև գործելի քարերն Եփրատայ հովտի վերայ էինք, այժմ մեր քայլը կը փոխենք արևելեան հիւսիսային ուղղութեամբ Երասխայ հովիտն ի վայր խոնարհիլ, տակաւ առ տակաւ Ղազու-Ղայի ջրին մերձենալ, 3 ժամէն Չոլախլու հայ գիւղն հասնել: Այս տեղ Գուլլիճի ջուրն յարեմտից գալով՝ $\frac{1}{2}$ ժամ այս գիւղից բարձր կը խառնուի Ղազու-Ղայի ջրին, մէկ քիլոմէթր գիւղի հարաւից կանցնի յարեւելս՝ քիչ ինչ արեւելեան հիւսիս շեղուելով՝ Չոլախլուից 1 $\frac{1}{2}$ ժամ հեռաւորութեան վերայ Երասխայ մէջ կը թափի:

Չոլախլուէ ևս մեր ուղին շարունակելով մի ժամից Զարապխանայ՝ հասանք: Աստի կարս գացողներն դէպի հիւսիս ճանապարհորդելու են, իսկ մենք ուղղակի արեւելեան ուղղութիւն մի բռնելով՝ կը շարունակենք Երասխայ աջ ափն ի վայր մեր ընթացք:

Երկու ժամ մեր ընթացք շարունակելով հասած եմք հանդէպ Սաթվերան գիւղի, Մատուռայ ջրի յերասի խառնուած վայրը: Սաթվերան մեր հիւսիսն Երասխայ ձախ ափին մօտ հաստատուած է, Մատուռայ ջուրն որ մեր ի հարաւ արեւելս դառնուած Բօզ-թէփէ լերան հիւսիսային կողերէն կիջնայ:

Գարձեալ յարեւելս շարունակեցինք մեր ուղին ցմիշտ մեր ձախ կողմն Երասխն է, որ թաւաղգոր կընթանայ, իսկ մեր աջ կողմն մինչև Բօզ-թէփէ հինգ ժամու չափ տարածութեամբ կը ձգուին հռչակաւոր Մատուռայ Եղենեաց անտառն, Մատուռն, Մատուռայ

1. Զարապխանայ կը մտայ Գուլլիճի ջրի ձախ եզրն, ուստի $\frac{1}{2}$ ժ. արեւմուտք Չոլախլու հայ գիւղն, Բաշ գիւղ՝ 1 ժամ Չոլախլուէ արեւմուտք եւ 1 ժամ ի հիւսիս Արմուտլու գիւղի:

Ղազու-Ղայի ծորն սեւ քարերէ կազմուած է, անտառաւոր վայր է, ուր կայ դիզի, կենի, (արտուծ) ծառեր: